ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ*

Գայանե Հարությունյան

Բանալի բառեր՝ Ազգային ինքնություն, բարոյական կերպար, Օրֆ-Շուլվերկ, ժողովրդական երգաստեղծություն, ազգային ինքնաճանաչում, երաժշտական լեզու, մշակութային գանձարան, ազգային երաժշտություն:

Մշակութային արժեքները ժողովրդի անցյալի խոսուն վկաներն են, որոնք ծնվել ու հարատևել են ժողովրդի հետ: Հայ երաժշտարվեստը, լինելով հայ մշակույթի բացառիկ նվաճումներից մեկը, նույնպես գալիս է դարերի խորքից: Այն մեր ազգային դիմագծի յուրատեսակ նկարագիրն է, ժողովրդի անցած ուղու պատմությունը:

Անաղարտ հայ երաժշտությունն այսօր մեր անձնագիրն է՝ աշխարհին ուրույն ազգային ոճով ներկայանալու և համաշխարհային մշակույթի գանձարանում տեղ ունենալու համար:

Ազգային երաժշտությունը հայրենի բնաշխարհի նկարագիրն է, նրանում պատկերված են հայ մարդու ապրելակերպն ու ներաշխարհը, ձգտումներն ու իղձերը, նրանում է ամփոփված ժողովրդի իմաստնությունն ու փիլիսոփայությունը: Ազգային երաժշտությունը այն կարևորագույն հիմնասյուներից մեկն է, որ ծառայում է հայ մարդու ձևավորմանն ու զարգացմանը, նպաստում հայեցի դաստիարակությանը:

Վաղ մանկությունից ազգային երաժշտության հետ հաղորդակցումը զարգացնում է երեխայի ներաշխարհը, նպաստում անձի բարոյական կերպարի ձևավորմանը: Իզուր չէ, որ երեխայի ծնվելուն պես իմաստուն մայրերն ու տատիկները նրա համար մայրենի լեզվով օրոր են երգում:

Ազգային երաժշտությունը օգնում է երեխաներին հասանելի դարձնել ազգային գաղափարները, սերմանել հայրենասիրություն, դաստիարակել ազգային արժեհամակարգը գնահատող սերունդ: Այն նպաստում է ազգային գիտակցության ամրապնդմանը, պատմամշակութային արմատների պահպանմանը: Հիշենք, թե ինչ տեղի ունեցավ մեր հայրենիքում Արցախյան ազատամարտի տարիներին. երգը պայքարի էր տանում մարդկանց, երեխաներն էլ մեծ ոգևորությամբ ու սիրով կատարում էին ռազմահայրենասիրական երգեր, ոգեշնչվում ազգային գաղափարներով: Այդ տարիներին փոխվեց մանուկների երգացանկը, վերաարժևորվեցին շատ մոռացված երգեր, որոնց կրողները դարձան երեխաները, ինչը և ազգային ակունքներին առավել մոտ կանգնելու հնարավորություն տվեց:

Աշխարհում գոյություն ունեցող լավագույն երաժշտական կրթական համակարգերը ստեղծվել են ազգային երաժշտության հիմքի վրա: Օրինակ՝ Հունգարիայում երաժշտական կրթությունը կազմակերպվում է հունգարացի կոմպոզիտոր, մանկավարժ Զոլտան Կոդայի ստեղծած համակարգով: Այստեղ առաջնահերթությունը տրվում է ազգային երաժշտության ուսուցմանը, քանի որ ըստ հեղինակի՝ երեխան նախ պետք է սովորի «խոսել» իր մայրենի երաժշտական լեզվով, յուրացնի հարազատ ժողովրդի մեղեդիները, ինչը թույլ կտա զգալ և հասկանալ այլ ազգերի երաժշտությունը:

Նշենք նաև 20-րդ դարի կեսերին գերմանացի երաժիշտ-մանկավարժներ Կ. Օրֆի և Գ. Կեետմանի կողմից ստեղծված հանրահայտ «Օրֆ-Շուլվերկի» մասին, որը աշխարհում հայտնի է որպես երաժշտության ուսուցման կազմակերպման արդյունավետ համակարգ: Հեղինակները համոզված են և առաջնորդվում են այն սկզբունքով, որ

* Հոդվածն ընդունվել է 14.12.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել մ.գ.դ., պրոֆեսոր Յ. Յուզբաշյանը: 25.12.19:

երաժշտական դաստիարակությունը պետք է հենվի ազգային երաժշտական արմատների և ժողովրդական բանահյուսության մեջ ամրակայված հնչերանգային խորը շերտերի վրա: «Շուլվերկը» բացառիկ համակարգ է, և այն օրինակ է դարձել տարբեր երկրների համար: Յուրաքանչյուր երկրում տպագրվելով՝ այն հարստացվում է տվյալ երկրի ազգային երաժշտական նվաճումներով, մասամբ՝ մանկական ֆոլկլորով: Եվ այստեղ նպատակը ոչ թե նորը հորինելն է, այլ սեփական ազգային հարստության մեջ այդ նորը գտնելն ու ժամանակակից շնչով մատուցելը:

Հայ իրականության մեջ երաժիշտ-մանկավարժները նույնպես կարևորել են ազգային երաժշտության դերը մատաղ սերնդի կրթման գործում: Կոմիտասը գտնում էր, որ ժողովրդական երգերն ու պարերը, լինելով ժողովրդի կյանքի բազմազան կողմերն արտահայտող գանձեր, պետք է դառնան երեխաների երաժշտական դաստիարակության և պարային կարողությունների զարգացման հիմնաքարը:

Ռոմանոս Մելիքյանն էլ ընդգծել է. «Նա, ով չի զգում, չի սիրում իր մայրենի երաժշտությունը, նա չի զգա ու չի սիրի ուրիշի երաժշտությունը».[1]

«Մենք այն կարծիքին ենք, թե մատաղ սերնդի ականջին ժողովրդական երգը որքան շատ հնչի, այնքան լավ, որովհետև այդպիսով միջոց տված կլինենք նրան, գիտակցորեն, թե անգիտակցորեն հայի ստեղծագործության ինքնուրույն գծերն ըմբռնելու և սիրելու»[2]:

Ազգային երաժշտությունն այն հիմնական ու կարևոր աղբյուրն է, որը հնարավորություն է տալիս իրականացնելու երեխաների երաժշտական դաստիարակության, երաժշտական մտածողության զարգացման գործընթացը: Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում այսօր կիրառվում է այնպիսի երաժշտական կուռ համակարգ, որը լիովին հենվում է ազգայինի վրա: Հետևելով համաշխարհային երաժշտամանկավարժության լավագույն օրինակներին ու առաջնորդվելով ազգայինի յուրացումից հետո միայն համամարդկային արժեքների ճանաչմանն անցնելու սկզբունքին՝ գիտնական, մանկավարժ Յու. Յուզբաշյանը ստեղծել ու մշակել է հայկական դպրոցներում կիրառվող լիարժեք ազգային երաժշտական համակարգ:

Հայ երաժշտության զարգացման ընթացքում ստեղծվել են բազմաթիվ ժանրեր, որոնք թեմաների ընդգրկուն լայն շրջանակ ունեն: Ժողովրդի շուրթերից հնչել են աշխատանքային գործընթացը նկարագրող հորովելներ, կանանց աշխատանքային երգեր, հայի կամքն ու ուժը գովերգող վիպերգեր, դաստիարակչական նշանակություն ունեցող երգիծական, սիրո, ազգային – հայրենասիրական, բարքեր ու սովորույթներ ներկայացնող ծիսական երգեր:

Հատկապես մանուկների համար են հորինվել օրորոցայինները, մանկան գովքի ու գորովի երգերը, ինչպես նաև երեխաների կատարման համար երգեր ու խաղերգեր, ասելուկներ ու հանելուկներ:

Մանկական ստեղծագործություններում նկատելի են տարիքային որոշակի սահմանազատումներ, օրինակ՝ օրորի, գովքի, գորովի երգերը ասվել են երեխայի կյանքի առաջին տարիներին, խաղերգերը, բառախաղերը, հանելուկները շրջանառվել են առավել հասուն տարիքի երեխաների կյանքում: Օրորների կրողները, իհարկե, մեծահասակներն են՝ մայրերը, տատիկները: Օրորը, լինելով ժողովրդական երգաստեղծության հնագույն ժանրերից մեկը, նաև կարևոր աղբյուր է երեխայի դաստիարակության համար: Օրորների թեմատիկան շատ լայն է, քանի որ մայրը երգով արտահայտում է ոչ միայն իր հույզերն ու ապրումները, այլև նկարագրում է հայրենի բնությունը, կենդանական ու բուսական աշխարհը, մանկանը հաղորդակից է դարձնում իր ժողովրդի անցյալին, նրա մեջ արթնացնում ազգի հերոսական ոգին: Օրորը չի կարող միայն քնեցնելու երգ համարվել, այն տեղեկություն է տալիս անցյալի կենցաղի, հասարակական բարքերի մասին, իր մեջ ամփոփում է ողջ ժողովրդի պատմությունը: Մոր երգի միջոցով երեխան ստանում է իր առաջին երաժշտական տպավորությունները, ինչն էլ նրա նախնական գեղագիտական

ընկալումների ձևավորման համար հիմք է դառնում: Օրորները աշխարհագրության, պատմության, հայրենասիրության «առաջին դասերն» են, որ մեծապես նպաստում են ազգային ինքնագիտակցության ձևավորմանը:

Երեխաների առօրյայում իրենց տեղն են ունեցել խաղերգերը, հաշվերգերը, որոնք նպաստել են երեխայի մտքի ճկունության զարգացմանն ու նաև եղել ժամանցի միջոց:

Երեխաները բոլոր ժամանակներում սիրով ու ոգևորությամբ մասնակցել են ժողովրդական տոնախմբություններին, դարձել են այն երգերի կրողները, որոնք ասել են մեծահասակները տարբեր արարողությունների ու ծեսերի ժամանակ: Երեխաները շրջել են տնետուն, երգել ծիսական այդ երգերը՝ նվերներ ստանալու ակնկալիքով: Վաղնջական ժամանակներից են մեզ հասել օրացուցային որոշակի ծեսերի հետ կապված խաղերգեր - խաղիկները, որոնք կատարվել են «Զան գյուլում» գարնանային շուրջպարի, սիրո և պտղաբերության Աստղիկ աստվածուհուն նվիրված Վարդավառի, Նավասարդի, Տրնդեզի և այլ տոնախմբությունների ժամանակ: Դրանք կենսուրախությամբ, սիրո տրամադրությամբ, հումորով հագեցած երգեր են, որոնք ունեն հստակ, պարզ ձևեր, ինչի շնորհիվ դիմացել են դարերի փորձությանը և պահպանել կենսունակությունը: Այսօր էլ ականատես ենք լինում, թե նախադպրոցական տարիքի երեխաները ինչ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ազգային տարբեր տոնակատարությունների ժամանակ կատարվող երգերի հանդեպ: Մեծ սիրով են սովորում Բարեկենդանի, Զատիկի, Համբարձման, Վարդավառի տոներին նվիրված երգերը և դրանք կատարելիս առույգանում ու ոգևորվում են: Օրինակ՝ («Թագվորի մեր, դուս ա-րի», «Այլի հո՜», «Խնոցի», «Ճորերգ», «Յալալի», «Զա՜ն, ծաղիկ», «Սոնա յար»): Հարյուրամյակների ընթացքում այդ երգերը կատարելագործվել ու բյուրեղացել են, մեծահասակների շատ ստեղծագործություններ դարձել են երեխաների սեփականությունը, հարմարեցվել նրանց հետաքրքրություններին ու վերամշակվել հենց երեխաների կողմից: Այսինքն՝ երեխաները նույնպես իրենց ավանդն են ներդրել երաժշտական ազգային ստեղծագործության պահպանման ու զարգացման գործում:

Ազգային երաժշտարվեստի հարուստ ժառանգությունը՝ վիպերգերը (Հայկ ու Բելի, Արամի, Տորք Անգեղի մասին, «Սասունցի Դավիթ» էպոսը), ավանդազրույցները, պատմական, ծիսական երգերն ու խաղիկները մեր ակունքներն են, որոնց միջոցով կարողանում ենք երեխաներին մատչելի ձևով բացատրել, թե ով ենք մենք և որտեղից ենք գալիս:

Յուրաքանչյուր ազգ ունի իր երաժշտությունը, յուրահատուկ երաժշտական լեզուն: Ամեն երեխայի ոչ միայն հոգեհարազատ է իր ազգային երաժշտությունը, այլև առավել հասկանալի է ու մատչելի: Իհարկե, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ազգային երաժշտության զգացողությունը ժառանգաբար է փոխանցվում սերունդներին: Ուրեմն նպատակահարմար է նախ և առաջ լավ իմանալ, յուրացնել իր ազգի երաժշտական լեզուն, այնուհետև, այլ ժողովուրդների երաժշտական լեզուները սովորել ու գնահատել:

Նախադպրոցական տարիքը երեխայի կյանքում կարևոր փուլ է երաժշտական մշակույթի յուրացման առումով: Այս տարիքում արդեն երեխաները զգում են մեղեդու արտահայտչականությունը, քնարականությունը, համապրում են երաժշտության միջոցով փոխանցվող իրադարձություններն ու հույզերը: Երեխայի համար շատ կարևոր է վաղ տարիքում երաժշտական տպավորություններ ստանալը, որոնք ամրապնդվում են նրա հիշողության մեջ, հոգեհարազատ են դառնում և ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, բնավորության գծերը, ընկալման և կատարման հնարավորությունները՝ նրանց երաժշտական մտածողության զարգացման նախնական փուլում նպատակահարմար է օգտվել հայկական ժողովրդական պարերգերից և կատակերգերից: Այդ երգերը կենսուրախ են, ակտիվացնող, ծավալով փոքր, պարային ռիթմով և հեշտությամբ են յուրացվում ե-

րեխաների կողմից: Այն, որ նախադպրոցական հասակում երեխաների երաժշտական մտածողության զարգացմանը նպաստում են հատկապես ժողովրդական երգերը, շեշտվել է շատ մասնագետների կողմից:

Այսպիսով, պատմական, ազգագրական փաստերը, մանկավարժական գիտափորձի տվյալները հիմնավորում են, որ տրիքորդային, տետրաքորդային և պենտաքորդային փոքրածավալ հնչյունաշարով հայկական ժողովրդական երգերն ունեն ինքնուրույն լադային ուղղվածություն: Այդ երգերը կարող են դառնալ այն հիմնական կորիզը, որի շնորհիվ հնարավոր է զարգացնել կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողությունը:[3]

Մինորային լադում ծավալվող կանանց աշխատանքային երգերը ևս մատչելի են երեխաների համար: Երեխաների երաժշտական մտածողության զարգացման համար ուսուցման և դաստիարակության գործընթացում հարկավոր է նրանց ունկնդրմանը ներկայացնել ազգային երաժշտությունը բնութագրող օրորոցային, քնարական, ծիսական, պանդխտության ժանրերը: Այս ժանրերի երգերը մանկավարժներին հնարավորություն են տալիս կիրառելու «նմանության և զանազանության» սկզբունքը, ինչը ավելի է ակտիվացնում երեխաների երաժշտական զարգացումը:

Ժողովրդի ստեղծագործությունը, աշխարհի կերպարահուզական արտացոլումը լինելով, անմիջականորեն առնչվում է երեխայի զգացմունքայնության հետ, ազդում է հույզերի, գիտակցության և ընդհանրապես անձի ձևավորման վրա: Եթե դասական երաժշտությունը նախադպրոցական հասակի երեխաների ընկալման և գիտակցման համար դեռևս բարդ է, ապա ազգայինը հասկանալի ու մոտ է բոլորին: Եվ ազգային երաժշտության ինտոնացիոն փորձի կուտակումը զգալիորեն նպաստում է, որ հետագայում երեխան հեշտությամբ յուրացնի դասական երաժշտությունը:

Ազգային երաժշտության յուրահատուկ երաժշտական լեզուն թույլ է տալիս արտահայտելու ժողովրդի հույզերն ու զգացմունքները, մտքերն ու ապրումները: Յուրաքանչյուր ազգի խոսակցական լեզվի և երաժշտության ռիթմաինտոնացիայի միջև որոշակի կապեր գոյություն ունեն: Խոսակցական լեզվի շեշտերը՝ ֆրազային, տրամաբանական, զգայական, կարևոր դեր են կատարում նաև երաժշտության երանգավորման համար: Եվ ինչքան կարևոր է լավ իմանալ մայրենի խոսակցական լեզուն, այնքան էլ անհրաժեշտ է երաժշտականի իմացությունը, քանի որ դրանք միշտ գտնվում են փոխադարձ կապի մեջ, զարգացնում են ազգային մտածողությունը և միասին դառնում ազգային ինքնության պահպանման միջոց: Երաժշտական լեզուն էլ ունի իր զարգացման, արտահայտման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, որոնց տիրապետելու համար պետք է յուրացնել երաժշտական լեզվի տարրերը: Երաժշտական լեզուները միմյանցից տարբերվում են լադահնտոնացիայի, մետրառիթմական, կառուցվածքային առանձնահատկություններով :

Մեր ազգային երաժշտական լեզվի առանձնահատկություններն ու օրինաչափությունները թույլ են տալիս ազգային հիմքով կազմակերպելու երեխաների երաժշտական մտածողության զարգացումը, այսինքն՝ երաժշտական դաստիարակությունը:

Երաժշտության ազգային պատկանելությունը բնորոշվում է ոչ միայն ինտոնացիայի, ռիթմի առանձնահատկություններով, այլև կառուցվածքով, ինչը ևս ժողովրդի երաժշտական մտածողության արդյունքն է: Հայկական ազգային երաժշտությունը աչքի է ընկնում մետրառիթմական և կառուցվածքային բազմազանությամբ: Հայ երեխաների մոտ նկատվում է մինոր լադային թեքումով երաժշտությանը նախապատվություն տալը, որը պայմանավորված է ծնողներից փոխանցվող ժառանգական նախադրյալներով:

Ժողովրդական ստեղծագործության ողջ հարստությունը օգնում է երեխային առավել հեշտությամբ յուրացնելու սեփական ժողովրդի լեզուն, նրա բարքերը, սովորությունները, բնավորության գծերը, ինչպես նաև նպաստում է աշխարհայացքի ձևավորմանը:

ժողովրդական երգերի գաղափարակերպարային հարուստ բովանդակությունը երեխայի գեղարվեստական ճաշակն է ձևավորում:

Զարմանալի չէ նաև այն, որ հասարակության մեջ հոգևոր վերածննդի արթնացման համար նույնպես կարելի է դիմել ժողովրդական ստեղծագործությանը: Ժամանակին դրա անհրաժեշտության մասին էր գրում նաև Կոմիտասը. «Ամբողջ մտահոգությունս է հասցնել աշակերտներին, որոնք դպրոցներու մեջ են, որ նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրությանը, տարածեն ժողովրդի մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա և այդ ազդեցության տակ ժողովուրդը, թոթափելով պատյանը, մտնե վերակենդանացման շավիղի մեջ»:[4]

Ամփոփելով ուզում ենք ևս մեկ անգամ ընդգծել, որ հայ ազգային երաժշտությունն իր գեղարվեստական արտահայտչամիջոցներով հարազատ ժողովրդի պատմությունն է արձանագրում և պատմաճանաչողության կարևոր արժեք է:

Ազգային երաժշտությունը հայեցի դաստիարակության լավագույն աղբյուրն է, որ նպաստում է ազգային ինքնագիտակցության ձևավորմանը:

Ազգային երաժշտության իմացությունը օգնում է հասկանալ և արժևորել ուրիշ ժողովուրդների երաժշտությունը:

Չմոռանանք նաև՝ հայ ազգային երաժշտությունը սերնդեսերունդ փոխանցվող այն արժեքն է, որ ազգապահպանման կարևոր գործառույթ է կատարել դարերի ընթացքում: Այն այսօր հասել է մեզ, և մենք էլ պարտավոր ենք անաղարտ պահել ու մատաղ սերնդին փոխանցել մեր ժողովրդի ստեղծած հարուստ երաժշտական ժառանգությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռոմանոս Մելիքյան, Հոդվածներ, նամակներ, հուշեր (կազմ.՝ և ծանոթ.՝ Քն. Գրիգորյան, պատ. խմբագիր՝ Գ.Գյոդակյան), Երևան, 1977, էջ 73-74:
2. Սահակյան Լ., Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Երևան, 2010, էջ 39:
3. Յուզբաշյան Յու., Դպրոցականների երաժշտական մտածողության զարգացման ազգային համակարգի տեսամեթոդական հիմունքները, (սեղմագիր) Երևան, 1996, էջ 36:
4. Հայոց եկեղեցու պատմություն: Հանրակրթ. դպր. 11-րդ դաս դասագիրք /Վ. Ղանդիյան և ուրիշներ, Երևան, 2013, էջ 164:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ազգային երաժշտության դերը հայ երեխայի կյանքում

Գայանե Հարությունյան

Հայ երաժշտությունը ժողովրդի անցյալի խոսուն վկան է, որը ծնվել է ժողովրդի հետ և հանդիսանում է մեր ազգային դիմագծի յուրօրինակ նկարագիրը:

Հայ իրականության մեջ երաժիշտ-մանկավարժները միշտ կարևորել են ազգային երաժշտության դերը մատաղ սերնդի կրթման գործում:

Կոմիտասը գտնում էր, որ ժողովրդական երգերն ու պարերը, լինելով ժողովրդի կյանքի բազմազան կողմերն արտահայտող գանձեր, պետք է դառնան երեխաների երաժշտական դաստիարակության հիմնաքարը: Վաղ տարիքում ստացած երաժշտական տպավորությունները միշտ մնում են երեխաների հիշողության մեջ:

Ազգային երաժշտությունը այն հիմնական ու կարևոր աղբյուրն է, որը հնարավորություն է տալիս իրականացնելու երեխաների երաժշտական դաստիարակությունը և երաժշտական մտածողության զարգացումը, ինչպես նաև նպաստում է ավելի լավ հասկանալ և սիրել այլ ժողովուրդների երաժշտությունը:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, այսօր կիրառվում է այնպիսի երաժշտական կուռ համակարգ, որը լիովին հենվում է ազգային և համամարդկային լավագույն փորձի վրա:

РЕЗЮМЕ

Роль и значение национальной музыки в жизни армянского ребенка

Гаяне Арутюнян

Ключевые слова: национальная идентичность, нравственный образ, Орф-Шульверк, создание народной песни, национальное самосознание, легенда, музыкальный язык, культурная сокровищница, национальная музыка.

Армянская музыка - красноречивый свидетель прошлого народа, уникальное описание нашей национальной идентичности. Армянские педагоги всегда придавали большое значение роли и значению национальной музыки в воспитании подрастающего поколения.

Комитас считал, что народные песни и танцы должны стать краеугольным камнем музыкального воспитания армянских детей. Полученные в раннем детстве музыкальные впечатления навсегда остаются в детской памяти.

Национальная музыка является лучшим и важнейшим источником формирования музыкального образования и мышления детей, способствующим пониманию и любви к музыке других народов. Сегодня в Армении существует система музыкального воспитания школьников, основанная на лучшем отечественном и мировом опыте в этой области.

SUMMARY

The Role and Importance of National Music in an Armenian Child's Life

Gayane Harutyunyan

Keywords: National character, moral character, Orph-Shulverk, folk singing, national consciousness, traditional legend, musical language, music treasures, national music.

Armenian music is a witness of the people's past, a unique description of our national identity.

Armenian musical educators have always attached importance to the role and importance of national music in the upbringing of the younger generation.

Komitas finds that folk songs and dances should become the cornerstone of musical education of Armenian children. The musical impressions received in early childhood will always remain in the child's memory.

National music is the best source of the development of national self-consciousness and Armenian education, which helps to understand and appreciate the music of other peoples. Today, in Armenia, there is a solid system of music education based on national music and the best domestic and world experience in this field.